

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՄՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ,

Կրօնքի Դերը քաղաքակրթութեան մէջ.—
Քաղաքացութիւն Միացեալ Տէրութիւններում.
—Մարտ և Հնչակ թերթերը.—Անգլիերէն Դա-
սերը նոր ուսանողներու համար.—Այլևայլ.

ԿՐՈՆՔԻ ԴԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.

Հայերէնի մէջ ՊԵՏՈՒԹԻՒՆ, բառով
կը բացատրենք Եւրոպացւոց Etat (State)
բառն: Պետութեան տեսակներն կը կո-
չենք միա-պետութիւն, ազնուա-պետու-
թիւն, հասարակա կամ հանրա-պետու-
թիւն: Առաջինը մէկ անձի, երկրորդը
երկրին բարձր դասուց կամ ազնուակա-
նաց և երրորդը բոլոր հասարակութեան
կամ հանրութեան ձեռքին մէջ լինել կը
նշանակէ վեհապետութիւնը (souverainete),
որ է ամենայն պետութեան հիմն:

Ինչ կը նշանակէ վեհապետութիւն,
վեհապետական իրաւունք կամ զօրութիւն:
«Հնազանդութիւն պահանջելու և անհնա-

զանդութիւնը պատժելու իշխանութիւնը
կը կոչուի վեհապետութիւն:» Հնազան-
դութիւն օրէնքի, ասել կ'ուզենք. և օ-
րէնքը ուրիշ բան չէ լայց եթէ ճշմար-
տութեան մեկնութիւնը (սխալ կամ ու-
ղիղ): Ճշմարտութեան մեկնութիւնը ե-
թէ մէկ մարդ մը տայ ըստ իւր հասկա-
ցողութեան և պահանջէ որ այդ մեկնու-
թեան հնազանդի ժողովուրդը, ըստ երե-
ւոյթին իւր կամքին հնազանդութիւն պա-
հանջած կը լինի միապետը, բայց իրօք,
ինչպէս ԿԻՉՈՅ բացատրած է, միապետն
իւր իշխանութիւնն և զօրութիւնը կը
պարտի ժողովրդին այն հաւատքին թէ
ինչանը կը կամի և կը հրամայէ ինչ որ
ճշմարիտ է, ինչ որ արդար է, և թէ իշ-
խանը լաւագոյն հասկացողն ու թարգմա-
նըն է արդարութեան և ճշմարտութեան:
Այդ հաւատքն է որ հնարաւոր կ'անէ ժո-
ղովրդին հնազանդութիւնը մի միապետի,
և ոչ թէ լոկ պատժոյ վախը:

ՌՈՒՍՈ լաւ բացատրած է զայս՝ ասե-
լով. «Ամենէն ուժովն ալ երբէք բաւա-
կան ուժով չէ միշտ տէր լինելու համար,
եթէ զիւր ոյժը իրաւունքի չփոխարկէ և
զհնազանդութիւնը՝ պարտաւորութեան:
Անտի՝ հզօրագունին իրաւունքը. իրաւ-
ունք հեզնօրէն առեալ ըստ երեւութին, և
իրօք սկզբունքի վրայ հաստատուած:» (Du
Contrat Social, Գլխ. Ա., Գլ. Գ.)

Արդ, կրօնքն է միակ զօրութիւնը որ կարող է կատարել այս փոխակերպութիւնը քաղաքակրթութեան կանխագոյն աստիճաններուն մէջ: «Անկողմնակալ քաղաքական պատմիչը, կ'ասէ ՊԼՐՃԷՍ, պիտի ուսուցանէ թէ պետութիւնը իւր զարգացման առաջին և ամենէն գոյարար շրջաններէն անցած է կրօնի զօրութեամբ, և կրօնի ձեւերուն տակ, այսինքն թէ պետութեան կանխագոյն ձեւերը աստուածապետական էին: Այս կատարելագոյն հասկանալի է ուղիղ քաղաքական իմաստասիրութեան մը տեսակէն: Առաջին և ամենէն հիմնական հոգեբանական սկզբունքը որ Պետութեան մը զարգացման մէջ կը գործէ, է բարեպաշտութեան սկզբունքը, այն է պաականաւոր և հնազանդութիւն: Մինչև որ ժողովրդի զանգուածին բնաւորութիւնը չկաղապարուի այս սկզբամբ, օրէնքի տէրութիւնը երբէք չի կրնար իրականանալ:»

Բ

Այս իրողութեան նայելով է որ ծանծաղամիտք ոմանք կարծեք են թէ կրօնի կամ Աստուծոյ գաղափարը ստեղծեք են իշխանք որպէս զի ժողովուրդներն իրենց հնազանդեցնելու դիւրութիւն ունենան: Ժիշդ հակառակն է ճշմարիտը. կրօնական զգացումն է որ զվեհապետութիւնն ստեղծեք է, ոչ թէ վեհապետութիւնը զկրօն: Ամենէն խորախոհ իմաստասէրներն ոչ միայն ընդունած են զկրօն այլ և անխուսափելի կը ճանաչեն զայն: Երբ ՎՕԼԴԷՆԻ Կարդաց *Esprit des Lois* (Ողի Օրինաց) հրաշակեալը, ասաւ թէ «մարդկային ազգը կորուսեք էր իւր տիազոսները, Պ ՏԼ ՄՈՆԴԷՍԿԻԷՍ քոտծ է գոյն:» Արդ, MONTESQUIEU, ՎՕԼԴԷՆԻ համար իսկ «քանչելի այդ գրքին մէջ կ'ասէ հետեւեալը. *Ceux qui ont dit qu'une fatalite' aveugle a produit tous les effets que nous voyons dans le monde ont dit une grande absurdite'; car quelle plus grande absurdite' qu'une fatalite' aveugle qui aurait produit des etres intelligents?*» «Անոնք որք ասեք են թէ կոյր դիպուածը (կամ բաղդականութիւնը) արտադրած է այն բոլոր արգիւնքներն զորս կը տեսնենք տիեզերքի մէջ, յոյժ արտառոց խօսք մ'են ասած. քանզի ինչ կայ աւելի արտառոց քան ասել թէ

դիպուածը յառաջ բերեք է իմացական էակներ:»

Գ

ՄՈՆԴԷՍԿԻԷՍ և ՌՈՒՍՕ Փռանաշուոց մեծ յեղափոխութեան դարուն ամենախորին մատենագիրներն էին, և կը հաւատային Աստուծոյ, սակայն կային նուազ խորախոհ գրողներ, ինչպէս d'Holbach, որ անաստուածութիւն կը քարոզէին: Անաստուածներն ձեռք ձգեցին յեղափոխութեան ղեակը կարճ ժամանակի համար և Ֆռանսայէն կրօնքը վերցնել ջանացին: Վայրկեան մը կը թուէին յաջողիլ: Հակալրօնական հոսանքը այնքա՛ դժուար էր 1793—94ին որ սահմանադրական կամ երդուեալ եկեղեցականներն անգամ հրաժարեցան իրենց եկեղեցական աստիճանէն, նոյն իսկ Գոնվանսիօնի կամ ազգային Համագումար ժողովոյ անդամ եպիսկոպոսներն հոսանքէն տարուեցան, միայն Գրիգոր եպ. դիմացաւ, որ կաթոլիկ եպիսկոպոսի տարադոմբ և ոսկի խաչ ի կուրծսն և ոսկի մատանին ի մատն՝ նստաւ մինչև համագումարին վերջը: Պաշտօնական Ֆռանսան այլ ևս կրօնք չունէր: Ուրեմն ասպարէզը բաց էր, և էպէստօֆի հետեւողներն փորձեցին Բանին պաշտօնը, le culte de la Raison, հաստատել ի Ֆռանսա: Ըստ յայտարարութեան Բարիզի քաղաքապետին՝ Ազատութեան և Բանի տօնը կատարուեցաւ մայրաքաղաքին մէջ, և Նոդա Տամ տաճարին սեղանին վրայ, փոխանակ կուսին, առօք փառօք դրին Օթէռայի դերասանուհի մը, իրեն ներկայացուցիչ Բանին, կամ «Սուրբ Ազատութեան» կամ «Բնութեան Դստեր:» Բարիզի բոլոր եկեղեցիներն փոխակերպեցին Բանի տաճարներու և անաստուածական բնամիօսութիւններ արին: Գաւառներն ալ նոր պաշտօնը կազմակերպող պատուիրակներ առաքեցին: Տեղ մը կաթոլիկ Սրբոց նշխարներուն տեղ դրին երեք հայրենասէրներու նշխարներն, տեսակ մը նոր երրորդութիւն Marat-Lepeletier-Chalierի Նանսիի մէջ կիյոթինի ոտից առջև այրեցին նշխարներ, պատարագամատոյցներ և ժամագրքեր, զկիյոթինը (զլխատիչ մեքենայն) կոչելով արդի ժամանակաց հրաշագործ սուրբը: Անաստուածներու այս տիրապետութիւնը կարճատեւ եղաւ. ժո-

ղովուրդը չուտով պաղեցաւ Բանի տաճարներէն: ՌՕՊԷՍԲԻԷՌ զօրացաւ և «սուրբ» Կլյոզիւնի յանձնեց առաջնորդել գեղեաններու, Կօպէլի, Տանդոնի և Բամիլ Տէմուլէնի զլուսններն, և հաստատեց աստուածեան պաշտամունք և հրովարտակով մը յայտարարեց թէ «Փռանսական ժողովուրդը կընդունի զԳերագոյն Էակն և զանմահութիւն հոգւոյ»: Տօնեցին Գերագոյն Էակին տօնը, բազմաթիւ գըլխատուութեամբ ազգութիւն տալով տօնին: Նոյնն արին դաւառներն: Այս ալ շատ չգիտացաւ: Բանին պաշտօնը երեք ամիս տեւեր էր, Գերագոյն Էակինն տեւեց 49 օր, Հիմնարկուն ՌՕՊԷՍԲԻԷՌ և իւրայինք գլխատուելով: Aulardի գործը (les Religieuses de la Revolution) յոյժ հետաքրքրական մանրամասնութիւններ կուտայ այս մասին:

Դ

Պատմութեան մէջ այս զարմանալի բաներն կարգաւորվ շատեր սխալ տպաւորութիւն ընդունած են ժԸ դարու Ֆռանսայի կրօնական զգացումներուն նկատմամբ: ՏԸ ԴՌԳԸՎԻԼ լաւ բացատրած է այս կետը: Յեղափոխական հեղինակներն եկեղեցւոյ դէմ խօսեր էին նկատելով ոչ անոր բուն կրօնական հանգամանքը այլ կառավարական դրութիւնը, անոր աւանդութեանց համար ունեցած պատկառանքը, անոր հաւատքը թէ անհատական բանէն գերագոյն հեղինակութիւն մը կայ, անոր նուիրապետութիւնը: Ծիւղդատոնց հակառակ սկզբանց վրայ կ'ուղէին երկրին քաղաքական և վարչական վերակազմութիւնը յառաջացնել — բաժնուիլ անցեալին աւանդութիւններէն, հետեւիլ բանին, իրաւունքը դասերն իրարու: Եւ որպէս զի յաջողէին եկեղեցւոյ հեղինակութիւնը խորտակել, մատենագիրներն ստիպում զգացին բուն կրօնքի դէմ ևս ուղղել իրենց հարուածներն: Բայց ժողովրդին մէջ անկրօնութիւնը այնքան չծաւալեցաւ որքան երեւոյթներն կը թուէին ցուցնել: Անոնք որ զերիստոնէութիւն կ'ուրանային՝ ձայն կը բարձրացնէին, և անոնք որ տակաւին կը հաւատային՝ կը լռէին: ասկէ ծագեցաւ թիւրիմացութիւն մը թէ այլ ևս հաւատացող չկար, և ուստի «Հին հաւատքը պահողներն վախցան իրենք միայն մնալ

այնմ հաւատարիմ, և առանձնութենէ աւելի վախնալով քան մոլորութենէ, միացան ամբողջին առանց անոր գաղափարակից լինելու: Ինչ որ ազգին մէկ մասին զգացումն էր, այսպէս երեցաւ բոլորին կարծիքը լինիլ:» Կրօնական հաւատոց վարկէ իյնալուն գլխաւորապէս կ'ընծայէ տը ԴՌԳԸՎԻԼ յեղափոխութեան այն «սոսկալի դիմագծութիւնը: ... Անկրօնութիւնը ամեն կողմ հանրային անհուն չարիք գործեց:» ... Այս շարիքներու առջև ըզգոտացաւ ժողովուրդը: «Տեսէք ինչպէս կրօնի յարգանքը վերստացած է աստիճանաբար իւր տէրութիւնը ազգին զանազան դասերուն մէջ, այն չափով որով անոնցմէ իւրաքանչիւրը կը ստանար փորձառութիւն յեղափոխութեան խիստ վարժարանին մէջ: Հին ազնուականութիւնը որ ամենէն անկրօն դասն էր 1789էն առաջ, 1793էն յետոյ ամենէն ջերմեռանդն եղաւ: առաջին զարնուողն էր, և եղաւ առաջին դարձի եկողը: Երբ միջին դասը (la bourgeoisie) զգաց թէ իւր իսկ յաղթանակին մէջ կը զարնուէր, այն ալ իւր կարգին մօտեցաւ հաւատոց: Կամաց կամաց կրօնի յարգանքը թափանձեց ամեն ուր որ մարդիկ հանրային անկարգութեան մէջ կորսնցնելու բան մը ունէին:»

Ե

Հայոցս մէջ շատ մը թիւր և թերի ըմբռնումներ կան Ֆռանսայի մեծ Յեղափոխութեան հանգամանաց և անոր կրօնական կամ անկրօնական զգացումներուն վրայ: Մեր մէջ մատենագիրողներ, բանաստեղծութեան հետամուտներ, յօդուածագիրներ, ճառախօսներ, մանաւանդ յեղափոխութեան ինքնակոչ առաջնորդներ շատ մը տխմար բաներ գրեր ու խօսեր են կրօնքի և եկեղեցւոյ և Աստուծոյ վրայ: Մեր տղայամիա «սօցիալիսդ»ներուն համար յեղափոխութեան փոթորկին առջևէն փաշի պէս ցրուելու առաջին բաները կըրօնքն ու հայ եկեղեցին, կաթողիկոսութիւնն ու պատրիարքութիւնն են: Այդ արմատական փոքր խմբակին ազդեցութիւնը քիչ կամ շատ կրող երիտասարդներու մեծկակ թիւ մը կայ որ վերջերս սկսած է անկրօնութիւն դաւանիլ և զԱստուած իոկ ծաղրել որ Հայաստանի կոտորածներուն թոյլ տուեր է: Սոքա հազիւ պիտի

Համին այսուհետեւ երգել հայրենասէր ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ «Ազատ Աստուածն այն օրից»ը, և ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ «Ազնիւ Ընկերը» զոր «Աստուծով» կ'օրհնէ: Դոցա համար ԲԱՖՖԻԻ Հեռեհալ տողերն են ամենէն իմաստալից և կարգալու արժանի իմաստասիրութիւնն:—

«Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս դուաթո խմում եմ, բայց առանց նուիրելու ձեր ոսկորներին: Եթէ դուք այս վանքերի տեղ, որոնցմով լիքն է մեր երկիրը, բերդեր չինէիք:—Եթէ դուք սուրբ խաչերի և անօթների փոխարէն, որ պառեցրին ձեր հորատութիւնը, զէնքեր զնէիք:—Եթէ դուք այն անուշահոտութեանց տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառօդ ծխէիք:—այժմ մեր երկիրը բաղաւոր կը լինի: Այլ ևս քուրդերը մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի և մեր կանայքը չէին յափշտակի: Այս վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք խլեցին մեր սիրտը և քաջութիւնը: Նրանք ձգեցին մեզ ստրկութեան մէջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը և խազը, առաւ խաչը և մտաւ Մանիայ այրը ճգնելու համար:—Ո՛վ Հայոց Հին աստուածներ, ո՛վ Անահիտ, ո՛վ Վահագն, ո՛վ Հայկ, նուիրում եմ այս բաժակը ձեր սուրբ յիշատակին, դուք փրկեցէք մեզ»...:

Եւ կը խոստովանիմ թէ սքանչանալով հանդերձ ԲԱՖՖԻԻ վիպասանական տաղանդին և կարողի ոճին վրայ, իւր այդ փոխիստիպութեան չեմ անորոշիր—չեմ անորոշիր նախ վասն զի տեսաւ է, երկրորդ վասն զի տեսելի մեծագոյն սխալներ կը ծնուցանէ պարզ ընթերցողաց մէջ: Հաւանական է թէ Բաֆֆի գորաւոր չլինելով պատմութեան և քաղաքական իմաստասիրութեան մէջ՝ թերի ըմբռնում ունէր կրօնի և մասնաւորապէս քրիստոնէական կրօնի դերին վրայ քաղաքակրթութեան մէջ և հայ եկեղեցւոյ փրկաւէտ դերին վրայ հայ ազգին համար—բայց նաև հաւանական է թէ մեր վիպասանն, ուզելով իւր ժողովուրդը մղել վառօդի ու սուրբի, հարկ համարեր է դէմ ելնել խնկին ու խաչին, զայնս արգելք կարծելով ինքնապաշտպանութեան հոգւոյ զարգացմանը Հայոց մէջ:

Սակայն ուսումնասիրելով Հայոց պատմութիւնը ընդհանուր պատմութեան և քաղաքական իմաստասիրութեան լուսով՝ կը համոզուինք թէ խուսկն, վանքն ու եկեղեցին պէ միայն լուս արգելքները չէ-

ին մեր ազգին ինքնապաշտպանութեանը, այլ ազգային գոյութիւնը պահպանելու միջոցը եղած են երբ ուրիշ միջոցներ չէին մնացեր: Ես ոչ խնկի սիրահարն եմ և ոչ վանքերու: Բայց ճշմարտութիւնն առեւ պարտիմ: Եւ ճշմարտութիւնն այս է թէ խուսկն մահամերձ Հայութեան չունչ մ'է եղած: Վանքը յաճախ բերդի տեղ բռնած է: Եկեղեցին իրրև փարախ պատսպարած է հայ հօտը: Կրօնական հաստատութեանց այդ արտաքուստ անարժէք և թոյլ մոխիրը դարերով պահպանած է Հայ կեանքի կայծը իւր տակ: Ուրեմն չանիծենք զեկեղեցին, սրբենք զայն: չխոտենք զեկեղեցականն, աղնուացնենք զայն: Հարհամարհենք պատրիարքութիւնը, պահպանենք զայն ամուր ցորհափ չունինք լաւագոյն բան մը: Իսկ զԱստուած միշտ պաշտենք:

ՔԱՂԱՔԱՑՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Դիւրին չէ գտնել շատեր, պանդուխտ կամ բնիկ Ամերիկացի, որոնք ձևացուցած են ուղիղ և յստակ գաղափար մը քաղաքացութեան նկատմամբ և կարող են տալ մի ուղիղ և յստակ սահման: Հասարակ փորձութիւնն է զայն նոյնացիկ քուէտրութեան իրաւունքի հետ: Սակայն Միացեալ Տէրութեանց քաղաքացութիւնն այսպիսի իրաւունք չի բերեր: Իւրաքանչիւր Տէրութեան քաղաքացութիւնն այդ իրաւունք կուտայ միայն քաղաքացւոց հազիւ կէս մասին, և, ընդհակառակն, շատեր որոնց տրուած է այդ իրաւունքն, քաղաքացիներ չեն: Հոս անտեղի է հաշուել և քննել այսպիսի զանազան թերի կամ սխալ ըմբռնումներ: Ինչ է ուրեմն քաղաքացութիւն, ոչ բացարձակ և վերացական քաղաքացութիւն, այլ այն որ հոս օրինօք հաստատուած և հասկցուած է: Որչափ որ մի յօդուածոյ սահմաններ ներքին կ'առաջագրւում ըստ կարի լուսաբանել այդ խնդիրն:

Մեր Սահման քաղաքացութեան՝ սա է—անդամակցութիւն մի ժողովրդեան քաղաքական մարմնոյն հետ, իրաւունք ընդունելով վայելելու ինչ քաղաքային (civil) և քաղաքական (political) իրաւունք-

ներ որ այդ քաղաքական մարմին տուած է իւր անդամներուն և պարտք: ստանձնելով կատարելու ինչ պարտքեր որ նոյն մարմինն դրած է անոնց վրայ, նոյն իսկ այդ մարմնոյ անդամոց բարեկեցութեան, երջանկութեան և յառաջդիմութեան համար: Հարկ է դիտել թէ իրաւունքներն զորս քաղաքացին կ'ընդունի և պարտքերն զորս կը ստանձնէ հաստատուած են այն մարմինն որուն ինքն անդամակցած է այն նպատակաւ որ ծառայեն քաղաքացութեան պատճառին— ժողովրդեան բարեկեցութեան և յառաջդիմութեան: Այս տեսակետով հպատակութիւնն գրեթէ ներհակն է քաղաքացութեան. քանզի հպատակութիւնն կը նշանակէ հեզ հնազանդութիւն ախրող իշխանութեան, կատարել ինչ պարտքեր որ այդ իշխանութիւն բռնցունէ հպատակին վրայ և վստելել ինչ դոյզն քաղաքային իրաւունքներ որ այդ իշխանութիւն իրեն ապահով կը դառնէ շնորհել հպատակներու, նախ և յառաջ իշխողներու բարեկեցութեան և իրենց իշխանութեան տեւման համար, և ապա հպատակներու բարօրութեան համար: Հպատակին համար «հաւատարմութիւն» կը նշանակէ գոհ մնալ և գովել հաստատուած կառավարութիւնը, կարգերն և օրէնքներն, և համբերութեամբ քաշել ամեն զրկանք. և նա' է ամենէն հաւատարիմ հպատակն որ կը համբերէ ամենէն ծանր անիրաւմանց և վշտանայ և պատրաստ է նորէն արիւն թափել այդպիսի վիճակի տեւման համար: Իսկ քաղաքացւոյն համար «հաւատարմութիւն» գրեթէ հակառակ պարտքն կը հարկադրէ— նշաւակել անարժաններ, պարսաւել զեղծումներ, մատնանիչ անել պակասութիւններ, և բարեօքել և պաշտպանել այն օրէնքներն և հաստատութիւններն որ կը ծառայեն քաղաքացութեան նպատակին— ժողովրդային բարեկեցութիւն և յառաջդիմութիւն:

Սահմանն զոր ի վերն սուինք վերաբերմամբ Միացեալ Տէրութեանց, կը տեսնենք թէ Միացեալ Տէրութեանց քաղաքացութիւն կը նշանակէ անդամակցութիւն Միացեալ Տէրութեանց ժողովրդեան քաղաքական մարմնոյն հետ: Այս զմեզ կ'առաջնորդէ այս իրին թէ Միացեալ Տէրութիւններում կան երկու քաղաքական մարմիններ— և երկու տեսակ կա-

ռավարութիւններ, իւրաքանչիւրն ունենալով իւրուրոյն իրաւասութիւնն նոյն հողի և նոյն քաղաքացւոյ վրայ: Աստի կը հետեւի թէ Միացեալ Տէրութիւններում կան երկու տեսակ քաղաքացութիւններ, երկու անդամակցութիւններ իւրաքանչիւր քաղաքացւոյ համար երկու տարբեր քաղաքական մարմնոց հետ: Միացեալ Տէրութեանց մի քաղաքացին նաև քաղաքացի է այն Տէրութեան որու նահանգին բնակիչ (resident) է նա: Բայց այն քաղաքացիներն որ չեն բնակիր մի Տէրութեան նահանգում, այլ կը բնակին Կօլումբիա Գուառում (District of Columbia) կամ Միացեալ Տէրութեանց Նահանգներում (Territories of the United States) կամ օտար երկիրներում, միմիայն Միացեալ Տէրութեանց քաղաքացիութիւնն ունին: Իւրաքանչիւր Տէրութեան քաղաքացութիւնն կուտայ այն իրաւունքներ և կը դնէ այն պարտքեր միայն որոց իրաւասութիւն Սահմանադրութեամբ յանձնուած չէ ազգային կառավարութեան: Իսկ Միացեալ Տէրութեանց կառավարութիւնն զիւր քաղաքացիներն կը զգեցունէ այնպիսի իրաւունքներով և կը բռնաւորէ այնպիսի պարտքերով միայն որոնք յայտնապէս կամ մակարեւորաբար կ'իյնան իւր իրաւասութեան տակ:

Սակայն Միացեալ Տէրութեանց քաղաքացութիւնն այս երկու քաղաքացութեանց գերադասն է: Քաղաքացին նախ Միացեալ Տէրութեանց և ապա իւր Տէրութեան քաղաքացին է: Նա պարտաւոր է հաւատարիմ լինիլ իւր Տէրութեան ցորժամ սա կը յարգէ Միացեալ Տէրութեանց գերագոյն իրաւասութիւնն: Եթէ իւր Տէրութիւն հակառակ գործէ Միացեալ Տէրութեանց Սահմանադրութեան, իւր պարտքն է հաւատարիմ մնալ Միացեալ Տէրութեանց քան իւր Տէրութեան: Իսկ եթէ Միացեալ Տէրութեանց կառավարութիւնն ինքն բռնաբարէ զայդ ազգային Սահմանադրութիւն, իւր պարտքն պարզ է: Կառավարութիւնն պարտի իյնալ, իսկ Սահմանադրութիւնն մնալ:

Ս. Գ. ՔԷՊԼԱՊԵԱՆ

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան նըստի դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Նիւ ճիւղ) ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեզ գիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

ԵՆԳԼԻՆԵՐԷՆԻ ԴԵՍԵՐ

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Է.

Հայերէնի և անգլիերէնի դերանուններուն բաղդատութիւնը քանի մը կարելի է գիտել քննելով կ'առաջնորդէ:

Հայերէն կ'ասենք. ՀՈՍ է, կամ Հոս է ան: Այդ խօսքը անգլիերէնի թարգմանելու համար պէտք է գիտնանք թէ Հոս եղողը ո՞վ է. եթէ մարդ մ'է, պիտի ասենք HE is here. եթէ կին մը կամ աղջիկ մ'է, SHE is here. եթէ գիրք մը կամ սեռ չունեցող ուրիշ իր մ'է, IT is here.

Հայերէն կ'ասենք. տեսայ գայն. որուն անգլիերէնը, ըստ տեղւոյն, կը լինի I saw him կամ her կամ it.

Միւս կողմէն հայերէնի ալ ՆԱ կամ ԱՆ տարբեր գործածութիւն ունի ինժնէն, անոնք-ը իրենք-էն, անոնց-ը իրենց-էն: Այս զանազանութիւնը կը պակսի անգլիերէնի մէջ:

Օրինակի համար անգլիերէն կ'ասեն. The Turks had come to the conclusion that no one would dare to withstand THEM. The Greeks, however, have opened THEIR eyes. Այդ խօսքը հայերէն սապէս կ'ասենք. Թուրքերը այն եզրակացութեան եկած էին թէ ոչ ոք պիտի համարձակէր իրենց դէմ կենալ: Յոյները, սակայն, բացին ԱՆՈՆԸ աչքերը:

ԱՆՈՆԸ աչքերը, վասն զի Թրքաց աչքերը ասել կ'ուզենք. բայց եթէ Յունաց աչքերը ասել ուզէինք, հայերէնի մէջ պիտի ասէինք իրենց աչքերը: Անգլիերէնը երկու պարագային մէջ ալ their կ'ասէ:

Ուրիշ օրինակ մը:

Mr. Gladston's son has declared that he does not ride. Կլաուսթոնի որդին յայտարարեւ է թէ չի հեծնար. ո՞վ չի հեծնար, Կլաուսթոն թէ իւր որդին. անգլիերէն he յարաբերական դերանունը անորոշ կը թողու այդ պարագային, և ընթերցողը խօսքի պարագաներէն պէտք է մակարեւէ կամ յառաջագոյն հրատարակուած լուրերէ, թէ որն է չհեծնողը, հայրը թէ որդին: Հայերէնը այդ բանը շատ որոշ կ'անէ. —Կլաուսթոնի որդին յայտարարեւ է թէ ՆԱ չի հեծնար—եթէ հայրն է չհեծնողը. թէ ինքը չի հեծնար, եթէ որդին է չհեծնողը:

«ՄԱՐՏ» ԵՒ «ՀԵՉԱԿ» ԹԵՐԹԵՐԸ

Նաղարպէ կեանքներու Հնչակ թերթի անկումը շատ զգալի է: «Մարտ» անունով թերթը զոր կը հրատարակեն Հնչակեանք, անբաղդատելի կերպով պերազանց է քան զՀնչակը: Հնչակի բոլոր ոյժը այն բանի մէջ էր որ ժողովուրդը չէր կրնար անոր գաղափարները հասկնալ, Մարտի ոյժը յայնմ է որ հասկանալի է թրքաշայոց, ոչ թէ միայն լեզուաւն ու ոճովն, այլ և խորհրդովն ու մտքովն: Միայն մէկ բանի համար կը ցաւինք—որ Մարտը այսօրու ուշ սկսաւ հրատարակուիլ:

Հետաքրքիր ենք իմանալ թէ Մարտ պիտի հոչակէ՞ նաեւ այն անհուն չարիքը զոր Նաղարպէ կեան գործեց հայ հոգւոյն և հայ երիտասարդութեան բարոյականին:

Մարտի երևումն գոհութեամբ կ'ողջունենք:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Հոնտոն, Մայիս 21. — Սթանտարտի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ.

Զինադադարն մեծ դժգոհութիւն պատճառած է Թէսալիոյ և Եպիրոսի թրքական զօրախմբերուն, և զինուորական յանձնաժողովն հրամայած է որպէս զի դժգոհութեան առաջնորդ եղողներն իրենց տեղերն դարձուն ընդ պահպանութեամբ. բանակաց ընկերացող իմամներուն հրահանգ տրուած է մասնաւորապէս յորդորել զօրքերն որ հնազանդ և օրինապահ լինին:

Կայսերական հրաման մը կ'արգիլէ վաճառումն լուսանկարներու և բանաստեղծութեանց որք վերաբերութիւն ունին պատերազմին կամ զօրավարաց քաջագործութեանցը: Այս արգելքին նպատակն է թոյլ չտալ որ ուրիշ զօրավար ժողովրդական զիւցազն հանդիսանայ:

Թայմզի Կ. Պոլսոյ թղթակիցը կ'ասէ. Սուլթանը երբ հեռագրեց իւր շնորհակալութիւնքը Վիլհէլմ կայսեր այս վերջնոյն խրատին համար, ինդրեց նաեւ որ շարունակը զնոյն և յոյս յայտնեց թէ այդ խրատն որ կը բղխէ Կայսեր և իւր միջև գոյ եղող զօրաւոր բարեկամութենէն պիտի մասնանիչ անէ Թուրքիոյ ճամբան ու

րով կարենայ իրրե յաղթող տէրութիւն յարգել տալ իւր իրաւունքներն :

Պէրլին, Մայիս 25. — Ֆրանքֆորթ Յայթունկի Կ. Պոլսոյ թղթակիցն կը գրէ. — Ռուսական դեսպան Պրն. Նէլիտով առաջարկած է իրրե պայման յունական պարտուց միջազգային հսկողութեան՝ թէ Ռուսիա պիտի իւրացնէ յունական տուգանքը իբրեւ մասնավճար այնմ զոր թուրքիա կը պարտի Ռուսիոյ. հաւանական է սակայն թէ Սուլթանը պիտի մերժէ քանի որ ինքըն իւրացնել կը փափաքի նոյն գումարն :

ԿՊոլսէն Տէյլի Նիւզի քաջուած հեռագիր մը կ'աւել թէ Բ. Դուռը պատրաստած է խնդրագիր մը յունարէն և թուրքերէն զոր թէսալիոյ բնակիչք պիտի ստորագրեն խնդրելով որ օսմ. իշխանութեան տակ դրուին :

Լոնտոն, Մայիս 26. — Մեծ Եպարքոսն շարաթ օրն Սուլթանին մատոյց տեղեկագիր մը թէ բոլոր իսլամք հաստատապէս որոշած են վերստանալ թէսալիան և կը յաւելու, Չեր վեհափառութիւնը յաղթական հանդիսացաւ հայկական և այլ խնդրոց մէջ երբ հաստատապէս մերժեցիք Եւրոպական ամեն թելադրութիւն. ուստի հաւատարապէս անդրդուելի պիտի մնաք նաև այս առթիւ : Բայց եթէ իմ տեսութիւնք անսխորժ թուին Չերդ Վեհափառութեան, խնդրեմ ընդունեցէք իմ հրաժարականն :

Լոնտոն, Յունիս 1. — Նախարարաց խորհուրդն գումարուելով ի Երլոնդ Բէօջ կը վիճաբանին խաղաղութեան պայմաններուն վրայ. բայց ամեն յիշատակութիւն թեսալիոյ վերաբերութեամբ զանց կ'առնուի : Կ'ենթադրեն թէ Թեսալիան թուրքիոյ կը վերաբերի յաղթութեամբ և թէ այդ նկատմամբ աւելորդ է բան մ'ասել : Տէրութիւնք պէտք է ցուցնեն միաբան և զօրաւոր ճակատ որպէս զի Սուլթանն ընկրկի իւր այս դիրքէն :

Կ. Պոլսէն Լոնտոն թայմզի քաջուած հեռագիր մը կ'աւել թէ զօրաւոր պատճառ կայ հաւատարմութեան Պուլկարիւ ազդեցութիւն ի գործ կը դնէ համոզելու Սուլթանն որ Մակեդոնիան ինքնօրէն գաւառ մը անէ կայսերացուն իշխանի մը ներքեւ :

Էտհէմ փաշա ետ Կ. Պոլիս զրկած է իւր զինուորական կցորդն իբրեւ Լրտես, զոր Սուլթանն զրկած էր յատկապէս

Էտհէմ փաշան դիտելու համար : Պաշտօնեայն անմիջապէս ասալճանի բարձրացում ստացաւ :

Լոնտոն, Յունիս 3. — Թուրք զինուորական յանձնաժողովը կը շարունակէ երկար նստեր ունենայ Երլոնդի մէջ. ընդհանուր տպաւորութիւնն է ի Կ. Պոլիս թէ խաղաղութեան բանակցութիւնք պիտի վրիպին և պատերազմն պիտի վերսկսի :

Լոնտոն, Յունիս 3. — Պէրլինէն հեռագիր մը կ'աւել թէ Թուրք կառավարութիւնն իւր ամբողջ նաւատորմին քննութեանն համար բանակցութեան մտած է անգլիական տան մը հետ : Զրահապատներն պիտի նորոգուին և վեց նոր պատերազմանաւեր պիտի շինուին :

Կ. Պոլիս, Յունիս 3. — խաղաղութեան բանակցութեանց առաջին նիստը տեղի ունեցաւ այսօր Թօփհանէի Պալատն դեսպանաց և Թէվֆիք փաշայի միջեւ. և ոչ մէկ գրագիր ներկայ էր : Իւրաքանչիւր դեսպան պիտի արձանագրէ ինքն իրեն համար :

Երեք ժամու խորհրդակցութեան արդիւնքն եղած է որ, դեսպաններէն երեքն պատրաստեն մէյ մէկ յիշատակագիր. Պրն. Նէլիտով սահմանազլիոյ ուղղութեան, Պրն. Գամպոն հելլենակատակներու իրաւասութեանց և Սըր Ֆ. Բըրրի պատերազմական տուգանաց վերաբերութեամբ : Ժողովն որոշեց վերստին գումարիլ շարաթ օրն զբաղելու համար այդ յիշատակագրերով :

Կ. Պոլիս, Յունիս 5. — Նախարարաց խորհրդոյ նիստը երէկ գիշեր ուշ տեսն հրաման ղրկեց այլ և այլ Կուսակալներու, որպէս զի ըստ կարելոյն փութով յանձնաժողովներ ընտրեն հաւաքելու և ղրկելու համար ամեն կարգի պահեստի զօրքերն ինչպէս նաև բոլոր պահեստի ռազմաթերթն : Պետական գործարանք տիւ և գիշեր կ'աշխատին փամփուշտ ևն. պատրաստելու համար :

Կ. Պոլիս, Յունիս 5. — Այսօր մեծ Տէրութեանց դեսպաններուն և Արտաքին Գործոց Նախարար Թէվֆիք փաշայի միջև տեղի ունեցած խորհրդակցութեան մը պահուն Պրն. Գամպոն, Սըր Ֆիլիպ Բըրրի և Մինեօր Փանճա (Ֆուսսայի, Սնգլիոյ և Իտալիոյ Դեսպաններն) որոշակի յայտարարեցին թէ թէսալիոյ Թրքաց կողմէ վերագրամանը ընդդէմ են :

Մեծ կարեւորութիւն կը արուի այս յայտարարութեան զի ոչ միայն որոշակի կը յայտնէ վերե յիշուած տէրութեանց դիրքն, այլ նաև կը ցուցնէ Ռուսօ-Գերման մերձեցումը : Կը հաւատեն թէ երեք կայսերց՝ Վիկտորի, Չարին, և Ֆրանց Եօզէֆի դաշնակցութիւնն արդէն կատարուած իրողութիւն մ'է :

Մայիս 29ին Նիւ Եորք հասան երկու հոգեւոր հովիւներ, մին Փրովիտէնսի Հայոց համար, միւսը՝ Ուստրերի Վաղինակ վարդապետ և Մաշթոց վարդապետ, երկուքն ալ երեսասարդ են:

Նիւ Եորք քաղաքի Հայերն կը ջանան, ի ձեռն հոգաբարձութեան մը, կարգադրութիւն անել զՏ. Վահրամ քահանայ Մըսըրէան իրենց հովիւ ունենալու: Տէր Վահրամ քիչ ժամանակ առաջ եկած է Ամերիկայ:

Միացեալ Նահանգաց Նախագահ Մք Քինլի զՏր. Էնճէլ անուանած էր իրրեւ լիազօր և արտասովոր դեսպան առ Բ. Դուռն: Այս ընտրութիւնը ամեն կողմէ ջերմապէս կը շնորհաւորէին իբրեւ քաջաբարձ և ահա Սուլթան Համիտ կ'առարկէ, այն թիւրիմացութեամբ թէ Էնճէլ գաղտնի ճիշդութեան ընկերութեան մը կը պատկանի և Մահմետականներն դարձի բերելու պիտի աշխատի: Պետական Գարսուղար Տիար Շէրման հարկ եղած բացատրութիւններն տալով հասկցուցած է Դրան թէ Էնճէլ պարզապէս անդամ է Ժողովական կոչուած եկեղեցւոյ որ ուրիշ յարանուանութեանց նման է: Ասոր վրայ Համիտ համոզուեր է և Տր. Էնճէլ օրերս ճամբայ չ'ենէ դէպ ի կ. Պօլիս:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Պ. Պետիկեանի «Մենտոր» անուն աշխատասիրութեան ծանուցումը նախորդ թուով հրատարակած էինք, Ամերիկացի տպագրիչներու խոստմանը համեմատ թէ չորս կամ հինգ օրէն տպագրութիւնը պիտի աւարտէր: Բայց այնուհետեւ դժուարութեան հանդիպելով, ելեկտրոթայի եղած երեսներու անհաւասարութիւններն չիտկելու համար, ուշացուցին գործին աւարտումը: Խմբագրութեանս դրամ յըղած են ոմանք այդ գրքէն գնելու համար. անոնց իւրաքանչիւրին կը պատասխանենք այս ազդով և կը վստահացնենք թէ գիրքը չկրնար այլ ևս շատ ուշանալ, և երբ որ մեր ձեռքը հասնին, անմիջապէս իրենց պիտի ուղարկենք:

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77 Էվինիու Նիւ Եորք
267 և 277 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՆՈՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ

Ատենախօսութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի
Առ Ամերիկեաց Եկեղեցիս,

Հանդերձ Անգլիերէն Բնագրովն
32 երես:

Այս ատենախօսութիւնը կը ցուցնէ Տէրութեանց պատասխանատուութիւնը Հայոց կոտորածներուն համար և կ'արտայայտէ Հայ ազգին սուրբ բարկութիւնը Եւրոպիոյ դէմ:

Գինն է 10 սէնթ կամ 50 սանթիմ:

Գրել ՀԱՅՔԻ Խմբագրին:

ՆՊԵՐԵՎԵՃՈՒ

Թէ և շատոնց է որ այս գործը կընենք, բայց նոր խանութ մը բացած լինելով կուգենք ծանուցանել թէ Թուրքիոյ ամեն տեսակ բաներ կը վաճառենք— Պլուր, իւղ, պամիս, ապուխտ և որ ի կարգին: Անուշեղէնք—լոխում, հելվա, ևն: Նաև ունինք ձեռագործներ, կիւլեաղի, նարկիլէ ևն. և վերջապէս ամեն բան կը գտնուի մեր քով: Մեր գներն շատ ատան են թէ հօլանդ թէ րիթէյլ: Օրտրներ կը յղենք ամեն տեղ C. O. D.ով: Մեր հասցէն է—

F. ZALOUM & SONS. ԱՊՈՒՆԱՍԵՐԻ
73 Washington St., New York

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.
Ա. տարի, 1 տուար 50 սէնթ կամ 7.5 Փր.
Բ. " 2 " կամ 10 Փրանք:
Գ. " 2 " " " "
Դ. " 2 " " " "
Ե. " 2 " " " "
Զ. " 1 " " 5 "

ՀԱՅՔ

ՀԵՆՐԻՍ ԿԻՍԵՄՍԵԸՅ

Տարեկան բաժնեգրին է կանխիկ
երկու տուար (տասն ֆրանք)
Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն